Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 650-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

219. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման համար՝ ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի ապահովում

Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել մարզի համայնքների կողմից ներկայացված 103 սուբվենցիոն ծրագրեր: Հաստատված ծրագրերից 75 ծրագիր ավարտվել և ֆինանսավորվել են, 23 ծրագիր իրականացվել և ֆինանսավորվել են մասնակի, 3 ծրագիր ավարտվել են, սակայն չեն ֆինանսավորվել համայնքների կողմից չֆինանսավորվելու պատճառով, մնացած ծրագրերը կավարտվեն 2020 թվականի ընթացքում: ՀՀ պետական բյուջեի մասնաբաժնով սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված 2մլրդ. 762մլն. 773հազ. 800 ՀՀ դրամից փաստացի ֆինանսվորվել է 1մլրդ. 855մլն. 683հազ. 386 ՀՀ դրամ:

Մարզի համայնքներում իրականացվել են ներհամայնքային ճանապարհների, գիշերային լուսավորության ցանցերի, ոռոգման առուների, ջրագծերի, հանդիսությունների սրահների, մանկապարտեզների, մշակույթի տների, խաղահրապարակների, արտաքին գազատարի, բազմաբնակարան շենքերի, վարչական շենքերի և թանգարանի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ:

219.4 **Տարածքային աճի բևեռի տեղակայման և զարգացման ուղղվածության ընտրություն չափորոշիչների հիման վրա՝ հաշվի առնելով երկրի զարգացման տեսլականը:**

Թարմացվել է Հայաստանի տարածքային զարգացման (ՏԶ) 2016-2025թթ ազգային ռազմավարությունը, որտեղ ներառվել է ՍՄԱՐԹ մասնագիտացման ռազամավարությունը՝ որպես համաչափ զարգացման կենտրոնական հենասյուն:

ՀՀ Գեղարքունիքի մարզը մրցունակ է, ապահովում է մարզի տարածաշրջանների միջև համախմբվածություն ու կայունություն, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական և համաչափ ու կայուն զարգացում՝ ըստ տարածաշրջանների կարիքների և ռեսուրսների՝ լավագույն փորձի և նորարարական մոտեցումների կիրառմամբ:

267. Միասնական երթուղային ցանցի ձևավորում

267.1 միասնական երթուղային ցանցի օպտիմալ տարբերակի մշակում

Ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր բնակավայր պետք է ապահովված լինի տրանսպորտային սպասարկումով մշակվել է մարզի միասնական երթուղային ցանց: Կազմվել են երթուղիների ուղեգծերը և չվացուցակները, որոնք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

267.2 Օպտիմալ երթուղային ցանցի փաստացի ուղևորահոսքի հաշվարկ

Կատարվել է մշակված երթուղային ցանցի փաստացի ուղևորահոսքի հաշվարկ և այն ներկայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

360. Հայաստանի Հանրապետության տարածքի բազմակենտրոն զարգացման ապահովում

360.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում

ՀՀ Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը 2020 թվականի ընթացում մշակելու համար հավաքագրվել է մարզի 41 բնակավայրերի ելակետային նյութերը:

367. Շենքերի և շինությունների անձնագրավորման, ինչպես նաև անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի և շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում:

367.1 «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում

Իրականացվել է մարզի հասարակական տարբեր նշանակության շենքերի մոնիթորիգ և գույքագրում:

12. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելում, թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության քաղաքականության մշակում՝ փոփոխվող իրավիճակին և ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ :

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում, կրթական հաստատություններում, բուժհաստատություններում կազմակերպվել են սեմինարներ, քննարկումներ, կլոր սեղաններ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը Գեղարքունիքի մարզում» թեմայով, որին մասնակցել են մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների,

տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության բաժանմունքների, մարզային լրատվամիջոցների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ, որի արդյունքում մարզի ազգաբնակչության մեջ բարձրացվել է իրազեկվածությունը և իրավական գիտելիքները:

15. Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բարելավում

Համայնքների խնամատարության և հոգաբարձության հանձնաժողովների գործնեությունը բարելավելու համար կազմակերպել են կլոր սեղաներ, քննարկումներ:

104. Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղությամբ խթանների ու մեխանիզմների մշակում.

ՀՀ կառավարության կողմից համայնքների հողօգտագործողներին սուբսիդավորված կարգով տրամադրվել է 27.2 տոննա գարնանացան մշակաբույսերի /ցորեն, գարի, կորնգան և այլ /սերմեր:

Մարզի 81578 հա վարելահողերից ցանվել է 41676 հա՝ 51% /2018թ՝ 47038 հա/

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մարզի սահմանամերձ Ճամբարակ համայնքի հողօգտագործողներին անհատույց կարգով տրամադրել է 12.411 տոննա գարնանացան ցորենի, 11.210տոննա հնդկացորենի, 11.021տոննա եգիպտացորենի, 4 տոննա ոլոռի, 4.78 տոննա սիսեռի, և 0.37 տոննա կորնգանի սերմեր՝ 2020 թվականին շուրջ 670 հա ցանք կատարելու նպատակով:

105. Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառում.

Մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ են տարվել մարզի ազգաբնակչության հետ՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող սուբսիդավորված վարկերի տրամադրման գործում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական օժանդակության 8 ծրագրերից օգտվել են 638 շահառուներ, պետության կողմից սուբսիդավորված գումարը կազմել է 149695121 ՀՀ դրամ:

106. Մեքենատրակտորային համակազմի թարմացման և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղատնտեսական կարիքների բարելավում

Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի «Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ-2» բաղադրիչի շրջանակներում մարզի թվով **10** «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ ձեռք են բերել գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ, 10 համայնքների արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվններին տրամադրվել է 33 միավոր գյուղտեխնիկա՝ 69.5 մլն ՀՀ դրամ արժողությամբ: Ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 67 միավոր գյուղգործիքներ, որից 34 տրակտոր , 3 կոմբայն և 30 գյուղգործիքներ:

111. տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում.

111.1 «Հացահատիկային, հատիկաընդեղային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն» ծրագրի իրականացում.

«Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրի շրջանակներում մարզպետարանի տնօրինմանը՝ հետագա օգտագործման իրավունքով, հանձնված 8400կգ հնդկացորենի, 1600կգ ոլոռի, 6200 կգ ոսպի և 7000կգ սիսեռի սերմացուներն անվճար հիմունքներով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կարգադրությամբ տրամադրվել են մարզի թվով 12 համայնքներին՝ նշված կուլտուրաների սեմնարտադրությունը զարգացնելու նպատակով:

113. կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրում.

113.1 բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում

2019թ. աշնանը ՀՀ Գեղարքունիքի մարզին հատկացված մկնանման կրծողների դեմ պայքարի համար 5.8 կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի և 471.32 լիտր «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութերը մարզպետարանի կողմից ստացվել և բաշխվել է մարզի թվով 28 համայնքներին, 5964 հա տարածքում միջոցառումներ իրականացնելու համար:

Մարզի թվով 57 համայնքներում իրականացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդություններով և վնասատուներով վարակվածության աստիճանի ուսումնասիրություն՝ 23650 հեկտարի վրա:

113.2 գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում.

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում՝ անասնաբուժասանիտարիայի միջոցառումները ժամանակին և պատշաճ կատարելու համար:
Հանրապետությունում գործող կարգի համաձայն անասնաբուժական սպասարկման միջոցառումներ են իրականացվել 10 հիվանդությունների նկատմամբ, ինչպես նաև իրականացվել են սահմանված ախտորոշիչ հետազոտություններ:

88.1 Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում

Իրականացվել է Սևանա լճի շուրջ 98 հա ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքներ / աշխատանքները շարունակվում են/:

89.2 «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառաշինական ծրագրերի (անտառակառավարման պլանների) մշակում և հաստատում նախարարի հրամանով

Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառավերականգնում և անտառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացման ծրագրի» շրջանակներում «Սևան

ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի մասնաճյուղի Ախթամար տեղամասում շուրջ 6.1 հա տարածքի վրա հիմնվել է նոր անտառաշերտ՝ տնկվել են բարդիներ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ճամբարակի անտառտնտեսության» մասնաճյուղի կողմից իրականացվել են լրացման աշխատանքներ (տնկվել են փակ արմատային համակարգով 18000 հատ սոճենի, 3300 հատ մանրատերև թեղի, 3800 հատ սովորական հացենի և 1000 հատ կեչի տեսակի սերմնաբուսակներ):

«Հայաստան ծառատունկ» ծրագրի շրջանակներում մարզի մի շարք համայնքներում իրականացվել են ծառատնկման աշխատանքներ՝ հիմնվել են նոր անտառաշերտեր:

21. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով առողջ ապրելակերպի խթանում:

21.1.Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով):

ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված 11-18 տարիքի երեխաների շրջանում «Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» ազգային հետազոտություն (ԴԵԱՎՀ) արդյունքները տրամադրվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ նրանց ուշադրությանը ներկայացնելով այն հանգամանքը, որ վերջին շրջանում դիտվում է չծխվող ծխախոտային արտադրատեսակների վաճառքի ծավալների ավելացում և այդ արտադրատեսակները տեղադրվում են երեխաների ուշադրությունը գրավող քաղցրավենիքի (կոնֆետներ, մաստակներ և այլն) մոտ: Ինչպես նաև համայնքների ղեկավարներին ներկայացվել է վերոնշյալ ծխախոտային արտադրատեսակների լուսանկարները վաճառասրահներում և առաջարկվել է իրենց իրավասության սահմաններում ձեռնարկել միջոցներ և հետևողական լինել «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի կիրարկման պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ:

Ծխախոտի դեմ պայքարի իրականացման նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական հաստատություններին է տրամադրվել ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 3286–Ա հրամանով հաստատված «Ծխախոտային կախվածությունից բուժման և խորհրդատվության ուղեցույց»-ը և «Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի» շրջանակներում ՀՀ առողջապահության նախարաության կողմից ձեռք բերված պաստառները, ինչպես նաև բժշկական հաստատությունների ղեկավարներին հորդորվել է տարածել ստորև հղումներով ներկայացված սոցիալական տեսահոլովակները.
https://www.youtube.com/watch?v=mR3pF6-H2TY, https://www.youtube.com/watch?v=ZjvIZ8-XTn8:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող սքրինինգային ծրագրի, ինչպես նաև հակածխախոտային ռազմավարության շրջանակներում իրականացվել է նաև հակածխախոտային և սքրինինգային ծրագրերի վերաբերյալ նյութերի բաշխում մարզի բժշկական հաստատություններին՝ բնակչության համար տեսանելի վայրերում փակցնելու և ազգաբնակչությանը տրամադրելու նպատակով:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում անցկացվել են զրույց – քննարկումներ, քարոզչական աշխատանքներ, այդ թվում պաստառների և վահանակների ձևավորում՝ «Մենք նախընտրում ենք առողջ ապրելակերպ» խորագրով: Կազմակերպվել և անցկացվել են մարզա-առողջարարական և մարզամշակութային միջոցառումներ, սպորտլանդիաներ:

Մասսայականությունը ապահովելու նպատակով մարզային խաղեր են անցկացվել մարզի համայնքներում՝ միջոցառումներին մասնակից դարձնելով մարզի ազգաբնակչության գրեթե 8,9 տոկոսին: Իրականացված միջոցառումները լուսաբանվել են «Քյավառ», «Սևան TV» հեռուստաընկերությունների և «Գեղամա աշխարհ» թերթի միջոցով և տեղեկատվություն է տեղադրվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կայք էջում:

23. Պայքար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ:

23.2. «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:

«Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել առաջարկություններ:

23.3. Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում:

Մարզի առողջապահական հիմնարկների տնօրեններին է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի օգոստոսի 26-ի N 2341-Լ հրամանով հաստատված «Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը»՝ ծրագրի ներդրման և իրագործման նպատակով:

24. Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում:

24.1. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:

«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել առաջարկություններ:

24.2. «ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:

«Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Հավելվածի բաժին 5-ի Գլուխ 2.1-ի 49-րդ կետի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել առաջարկություն առողջապահական հաստատությունները մարզային ենթակայության մնալու վերաբերյալ՝ առավել արդյունավետ կառավարման և բուժօգնության որակի վերահսկման համար:

80.1 Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա

Մարզի ուսումնական հաստատություններում կազմվել են «Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու» պլաններ:

Մարզի համայնքներում մշակման փուլում են «Աղետների ռիսկերի կառավարման պլանները», որոնց մշակման համար մարզպետի կողմից հաստատված պլան ժամանակացույցի համաձայն մարզի համայնքներին ցուցաբերվել է մեթոդական օգնություն:

Մարզի մի շարք ուսումնական հաստատություններում դեկտեմբերի 7-11-ը «Աղետների դիմակայության օր» խորագրով անցկացվել են գործնական և տեսական պարապմունքներ, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումով իրականացվել է «Տարհանման իրականացում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքից» թեմայով գործնական միջոցառում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզում 2019թ-ի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների փլուզման և հնարավոր քարաթափումների տեղամասերում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման միջոցառումների պլան-ժամանկացույցի համաձայն մարզի համայնքներում իրականցվել են՝

Գանձակ համայնքով անցնող Գռիձոր գետի հունի մաքրում 400 մետր, ափերի ամրացում 100 մետր, սելավատարի մաքրում 250 մետր և ափերի ամրացում 200 մետր, Մեծ Մասրիկ համայնքի Մասրիկ գետի հունի և սելավատարի մաքրում 1600 մետր, Սարուխան համայնքով անցնող Կուկուձոր գետի հունի մաքրում 400 մետր, Ճամբարակ համայնքի բնակավայրերով անցնող Գետիկ գետի հունի ուղղում, Վարդաձոր համայնքի սելավատարերի մաքրում 670 մետր:

Առաջացած արտակարգ դեպքերին առավել օպերատիվ արձագանքելու նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ բնակավայրում հիմնվել է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ: